ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«11» փետրվարի 2025 թվականի N 03-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 ենթակետով , «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով՝ **Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (5)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն		—	—	—
Այվազյան Վրույր	—	—	—	—
Գևորգյան Համլետ	—	—	—	—
Քալաշյան Վարսենիկ	—	—	—	—
Արոյան Տիգրան	—	—	—	—
Տոնոյան Արտյոմ	—	—	—	բացակա
Գրիգորյան Թամարա	—	—	—	—
Սարգսյան Ալիկ	—	—	—	—
			—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 11 -Ի ԹԻՎ 03 -Ն ՈՐՈՇՄԱՆ

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագիր 1.Կուրթան բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում:

Ծրագրի նախնական բյուջեն եղել է 92 մլն, որից համայնքի մասնաբաժինը կազմել է 24.500.000 մլն ՀՀ դրամ: Համայնքի ներդրումը կազմել է 26.000.000 մլն ՀՀ դրամ: Ծրագիրն ավարտված է : Ավարտական ակտը ստորագրման փուլում է:

Ծրագիր 2.Վարդաբլուր բնակավայրի մանկապարտեզի կառուցում:

Ծրագրի նախնական բյուջեն եղել է 157 մլն ՀՀ դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմել է 45 մլն ՀՀ դրամ: Կառուցման աշխատանքները ավարտվել են : Ավարտական ակտը ստորագրման փուլում է:

Ծրագիր 3. Ջուր Պուշկինոյին և Գարգառին: Պուշկինոյի Շինարարական աշխատանքների մրցույթը կայացել է , կնքվել է պայմանագիր : Ծրագրի բյուջեն կազմում է 348 000 000 մլն ՀՀ դրամ:/ Ջուր Պուշկինոյին ծրագիրը կազմում է 95 մլն ՀՀ դրամ, որից 28,5 մլն համայնքի մասնաբաժինն է / Ջուր Գարգառի ծրագրի 80 %-ը կատարված է: Ծրագրի արժեքը կազմել ՝ 253 մլն ՀՀ դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմել է 88 մլն ՀՀ դրամ:

Ծրագիր 4. Գերեզմանատների տարածքների բարեկարգում և ծածկերի կառուցում: Ծրագրի նախնական բյուջեն եղել է 10 մլն ՀՀ դրամ: 2024 թվականին Գյուլագարակ համայնքի բոլոր բնակավայրերի գերեզմանատներում իրականացվել է տարածքների բարեկարգման աշխատաննքեր և հանգստյան քարերի մոտ կառուցվել են պաշտպանիչ ծածկեր: :

Ծրագիր 5. Համայնքի ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում: Ծրագրի նախնական բյուջեն եղել է 50 մլն դրամ, որից 17 մլն դրամը համայնքի մասանաբաժինն է:

Ծրագիր 6. Գյուլագարակ բնակավայրում համայնքային արվեստի դպրոցի կառուցում: Սուբվենցիոն ծրագրի բյուջեն կազմում է 74. 900. 000 ՀՀ դրամ , որից համայնքի մասնաբաժինը՝ 41. 200. 000 ՀՀ դրամ: Կառուցման աշխատանքները ավարտված են: Հանձնվել է շահագործման:

Ծրագիր 7. Եկեղեցիների նորոգում: Ծրագրի նախնական բյուջեն եղել է 800.000 դրամ: Վարդաբլուրի Եկեղեցու տանիքի Վարդաբլուր գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու տանիքի վերանորոգման մասնակի վճարման համար տրամադրվել է 1 000 000 ՀՀ դրամ :

Ծրագիր 8.Կուրթան, Վարդաբլուր, Գյուլագարակ, Գարգառ, Ամրակից, Պուշկինո բնակավայրերում տուֆով սալարկման շինարարական աշխատանքների իրականացում:
Ծրագրի արժեքը կազմում է 133 000 000 մլն ՀՀ դրամ : Շինարարի հետ պայմանագիրը կնքված է:
Ծրագիր 9.2025 թվականի ասֆալտապատման և տուֆով սալարկման աշխատանքների համար կատարվել է նախագծման աշխատանքներ՝ 3 600 000 ՀՀ դրամ:

Ծրագիր 10. 2025 թվականի գիշերային լուսավորության համար վճարվել է 1 400 000 ՀՀ դրամ:

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Վերանորոգվել է Վարդաբլուր բնակավայրի վարչական շենքի տանիքը:

2. Իրականացվել ճանապարհների հարթեցում՝ Գյուլագարակ, Վարդաբլուր, Հոբարձի, Կուրթան բնակավայրերում: Բոլոր բնակավայրերում իրականացվել են փոսալցման աշխատանքներ:

3. Աղբահանությունը իրականացվել է բարձր որակով : Թե՛ տեխնիկայով, թե՛ մարդկային գործոնի ներդրմամբ կատարվել են սանիտարական մաքրման աշխատանքներ:Հարթեցվել են համայնքային և դաշտամիջյան ճանապարհներ, մաքրվել են հեղեղատարներ, գերեզմանատներում իրականացվել են մացառուտների մաքրման և ցանկապատների բարեկարգման աշխատանքներ:

Կազմեց՝ Ռուսլան Օհանյանը